ՊԱՅՄԱՆԱԳԻՐ № ՊԲ. 369

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ

«02» դեկտեմբերի 2025 թ. ք. Երևան

«ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմ» ՊՄ-ն, ի դեմս **գլխ.քարտուղար Մ. Դալլաքյանի** (այսուհետ՝ Պատվիրատու), որը գործում է կանոնադրության, հիման վրա մի կողմից, և **«Տեխնիկական անվտանգության բարձրագույն մարմին» ՍՊԸ**-ն, ի դեմս **տնօրեն Կարեն Բոյաջյանի** (այսուհետ՝ Կատարող), որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ Պայմանագիր) հետևյալի մասին

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Համաձայն Պայմանագրի Կատարողը պարտավորվում է Պատվիրատուի առաջադրանքով մատուցել Պայմանագրի 1.2 կետում նշված տեխնիկական անվտանգության փորձաքննությունների իրականացման ծառայությունները /Այսուհետ Ծառայություն/, իսկ Պատվիրատուն պարտավորվում է Պայմանագրի 3-րդ մասի համաձայն վճարել Ծառայության դիմաց:

1.2 Ծառայության նկարագիրը՝ Կատարողը Պատվիրատուի խնդրանքով և հանձնարարությամբ պարտավոր է իրականացնել ներքոթվարկյալը.

N	ԱՎՕ-ի անվանումը	ԱՎՕ-ի գտնվելու վայրը	Փորձաքնն. անվ.	Քանակ	Տվյալներ ԱՎՕ-ի №	Արժեքը (ՀՀ դրամ)
1.	Կաթսայատուն	ՀՀ Լոռու մարզ, ք. Վանաձոր, Հայքի հրապարակ 1	Փորձաքննություն	1	8/1-2374	50 000
Ընդամենը՝						50 000

1.3 Սույն պայմանագրով նախատեսված ծառայությունները Կատարողը մատուցում է «Տեխնիկական անվտանգության ապահովման պետական կարգավորման մասին» ՀՀ օրենքով և այլ իրավական ակտերով, **N 010/I-019 , 05.02.2024թ** հավատարմագրման վկայագրով սահմանված ուղղություններով, ինչպես նաև վերոնշյալ ակտերով սահմանված ընթացակարգերով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ և ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 **Կատարողը պարտավոր է.**

2.1.1 Ծառայությունը մատուցել պատշաճ որակով և ամբողջ ծավալով՝ հիմք ընդունելով փորձաքննությունների անցկացումը կարգավորող գործող նորմատիվային փաստաթղթերը, սահմանված կարգերը

2.1.2 Ծառայությունը մատուցել 20 աշխատանքային օրվա ընթացքում,եթե թերությունների վերացման նպատակով կազմված միջոցառումների ծրագրում այլ ժամկետ սահմանված չէ:

2.1.3 Ծառայությունը մատուցման արդյունքում Պատվիրատուին հանձնել սահմանված կարգով կազմված Փորձաքննության եզրակացություն(ներ) և այլ փաստաթղթեր, եթե այդպիսիք պահանջվում են տվյալ պարագայում:

2.1.4 Ապահովել Պատվիրատուի կողմից տրամադրված, ինչպես նաև Ծառայությունների մատուցման ընթացքում հայտնի դարձած այն տեղեկությունների գաղտնիությունը, որոնք պարունակում են պետական,

ծառայողական կամ օրենքով պաշտպանվող այլ գաղտնիք կամ Պատվիրատուն դրանք փոխանցել է Կատարողին գաղտնիության հիմունքներով և առանց Պատվիրատուի նախնական գրավոր համաձայնության՝ երրորդ անձանց առջև չհրապարակել դրանք:

2.1.5 Պատվիրատուի խնդրանքով վերջինիս տեղեկացնել հանձնարարության կատարման ընթացքի մասին և պատասխանել նրան հետաքրքրող հարցերին:

2.2 **Կատարողը իրավունք ունի.**

2.2.1 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 3-րդ մասով սահմանված վճարման կարգը առնվազն մեկ անգամ խախտելու դեպքում՝ հրաժարվել Պայմանագրի կատարումից և միակողմանի լուծել այն:

2.2.2 Պատվիրատուից ժամանակին պահանջել և ստանալ ծառայության մատուցման համար անհրաժեշտ փաստաթղթերը և տեղեկությունները:

2.2.3 Հրաժարվել Պայմանագրի կատարումից և միակողմանի լուծել այն, եթե Պատվիրատուի կողմից Ծառայության մատուցման համար առնվազն մեկ անգամ տրամադրվել է կեղծ տեղեկություն:

2.2.4 Ինքնուրույն որոշել Ծառայությունների մատուցման ընթացքը և եղանակները՝ հաշվի առնելով Պատվիրատուի շահերը:

2.2.5 Հրաժարվել Պատվիրատուի՝ օրենքին հակասող պահանջը կատարելուց:

2.3 **Պատվիրատուն պարտավոր է՝**

2.3.1 Չխոչընդոտել Կատարողի գործողություններին, Կատարողին տրամադրել նրա կողմից պահանջված և Ծառայության մատուցման համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը և տեղեկությունները, ծառայությունների մատուցման ընթացքում փորձագետին թույլատրել անարգել մուտք գործել արտադրական վտանգավոր օբյեկտի տեղակայման տարածք:

2.3.2 Կատարողին հայտնել ճիշտ տեղեկություններ (կեղծ տեղեկություններ տրամադրելու համար ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կարող է ենթարկվել պատասխանատվության):

2.3.3 Ծառայությունների դիմաց վճարել Պայմանագրի 3-րդ կետում սահմանված կարգով:

2.3.4 Ապահովել Կատարողի կողմից տրամադրված, ինչպես նաև Ծառայությունների մատուցման ընթացքում հայտնի դարձած այն տեղեկությունների գաղտնիությունը, որոնք պարունակում են պետական, ծառայողական կամ օրենքով պաշտպանվող այլ գաղտնիք կամ Կատարողը դրանք փոխանցել է Պատվիրատուին գաղտնության հիմունքներով և առանց Կատարողի նախնական գրավոր համաձայնության՝ երրորդ անձանց առջև չհրապարակել դրանք:

2.4 **Պատվիրատուն իրավունք ունի՝**

2.4.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի Ծառայության կատարման ընթացքը և որակը առանց միջամտելու նրա գործունեությանը:

2.4.2 Ծառայության մատուցմանը մասնակից դարձնել իր տեխնիկական անվտանգության ծառայությանը:

2.4.3 Կատարողից պահանջել Ծառայության մատուցման արդյունքում կազմված փաստաթղթերը իրեն ներկայացնել սահմանված կարգով և ձևաչափով

2.4.4 Մինչև Ծառայության մատուցման ավարտը հրաժարվել Պայմանագիրը կատարելուց՝ /միայն երկկողմանի համաձայնության պայմաններում/ Կատարողին վճարելով սահմանված գնի այն մասը, որը համապատասխանում է մինչև պայմանագրի կատարումից Պատվիրատուի հրաժարումը մատուցված ծառայությունների չափին, բայց ոչ պակաս քան սույն պայամանագրով նախատեսված ծառայության ընդհանուր արժեքի 50 տոկոսը:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ և ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Ծառայության արժեքը կազմում է 50 000 /հիսուն հազար/ ՀՀ դրամ՝ ներառյալ բոլոր հարկերը:

3.2 Ծառայությունների արժեքը Պատվիրատուն Կատարողի բանկային հաշվին փոխանցում է սույն պայմանագիրը կնքելուց հետո 5 (հինգ) աշխատանքային օրվա ընթացքում:

3.3 Պայմանագրի 3.1. կետում նշված գումարը չի ներառում Կատարողի կատարած այլ ծախսերը, որոնք անհրաժեշտ են Ծառայության մատուցման համար (մասնավորապես՝ թարգմանչական, լաբորատոր և նոտարական ծախսերը, ինչպես նաև այլ դատական ծախսերը):
3.4 Ծառայության արժեքը, վճարման կարգը և ձևը որոշվում են Պայմանագրով և չեն կարող կախվածության մեջ լինել Պատվիրատուի այնպիսի պահանջներից, որոնք կարող են ազդել ծառայության մատուցման արդյունքում Պատվիրատուին տրամադրվող եզրակացության բովանդակության վրա:
3.5 Պատվիրատուի պահանջով Պայմանագիրը լուծելու դեպքում վճարված գումարը ետ չի վերադարձվում, ծառայության ընդհանուր արժեքը ենթակա է վճարման, անգամ եթե Ծառայությունը դեռ ամբողջությամբ մատուցված չի:

4. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ – ՄԱԺՈՐ)

4.1 Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության արդյունք, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին: Սույն պայմանագրի շրջանակներում Կովիդ 19 /COVID 19/ համավարակով պայմանավորված իրադրությունը չի կարող համարվել անհաղթահարելի ուժ:

5. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

5.1 Պայմանագիրը կնքվում է և ուժի մեջ է մտնում այն ստորագրելու պահից:
5.2 Պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել կողմերից յուրաքանչյուրի կողմից՝ այդ մասին մյուս կողմին մեկ շաբաթ առաջ գրավոր ծանուցելով:
5.3 Պայմանագրի բոլոր փոփոխությունները և լրացումները կատարվում են գրավոր՝ երկկողմանի ստորագրմամբ:
5.4 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերի լուծումը հանձնվում է դատարանի քննությանը:
5.5 Պայմանագրի, դրանից ծագած իրավահարաբերությունների նկատմամբ գործում է ՀՀ օրենսդրությունը:
5.6 Ծառայության մատուցման շրջանակներում կազմված փաստաթղթերը օգտագործվում են միայն Կողմերից յուրաքանչյուրի կողմից այլ անձանց հետ քննարկումներում և/կամ բանակցություններում և/կամ այլ իրավիճակներում միայն մյուս Կողմի նախնական համաձայնությունը ստանալուց հետո:
5.7 Պայմանագիրը կնքված է 2 (երկու) օրինակից՝ հայերեն լեզվով, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:
5.8 Կողմերը և նրանց ներկայացուցիչները երաշխավորում են, որ իրենք ունեն անհրաժեշտ լիազորություններ սույն պայմանագիրը կնքելու և սույն պայմանագրով սահմանված պարտավորությունները ստանձնելու համար:
5.9 Սույն պայմանագրի դրույթների խախտման դեպքում Կողմերը պատասխանատվություն են կրում՝ համաձայն ՀՀ գործող օրենսդրության:

5.10 Պատվիրատուն իրավունք ունի ուշացումով կատարված աշխատանքների դիմաց Կատարողից պահանջելու տուժանքի վճարում՝ յուրաքանչյուր ուշացված օրվա համար ծառայության արժեքի 0,1% չափով:

5.11 Կատարողն իրավունք ունի սույն պայմանագրի արժեքի վճարման ուշացման դեպքում Պատվիրատուից պահանջելու տուժանքի վճարում՝ յուրաքանչյուր ուշացված օրվա համար ծառայության արժեքի 1% չափով:

5.12 Կատարողը չի կարող Պատվիրատուին երաշխավորել հանձնարարության կատարման արդյունքը՝ անկախ արդյունքի կանխատեսելիությունից:

6. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ և ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
«ՀՀ Լոռու մարզպետի աշխատակազմ» ՊՄ Կազմակերպության /ԱՁ անվանում/ Ֆիզ անձ	**«Տեխնիկական անվտանգության բարձրագույն մարմին» ՍՊԸ**
ՀՀ Լոռու մարզ, ք. Վանաձոր, Հայքի հրապ. 1 Հասցե	ՀՀ, ք. Երևան, Դավթաշեն 4-րդ թաղամաս., 51/3, 43 տարածք
ՀՎՀՀ՝ 06969135 ՀՎՀՀ/անձնագրային տվյալներ	ՀՎՀՀ՝ 02884309
Հ/Հ 900231002966 Բանկային վավերապայմաններ	«Այ Դի Բանկ» ՓԲԸ Հ/Հ 11813026767701
Հեռախոսահամար	Հեռ.՝ +374 43 409999
Էլ. հասցե	Էլ. հասցե՝ t.a.b.m.expertise@gmail.com
Գլխ. քարտ.՝ **Մ. Դալլաքյան** (ստորագրություն Կ.Տ)	**Տնօրեն՝** **Կ. Բոյաջյան** (ստորագրություն, Կ.Տ)